

ԲՆԱԿԱԾ ՏԵՂԵՐ, ՔԱՂԱՔՆԵՐ ԵՒ ԳԻՒՂԵՐ.

(6-7-2-1-2-2 7-2 0,7-7-7, 4884 8-2-2-7)

Հատ ցանկալի կլինէր որ քաղաքների փողոցների նոր մասերի շինութիւնը համապատասխանէր մեր այժմեան բնական տեղերի առողջապահական շինութեան մասին եղած հասկացողութեան, այս՝ մեծ քաղաքներում ամենից կարևոր է որոնք, լինելով հասարակական յարաբերութեան կենդրոն, հրապուրումեն ժողովրդի մեծ մասը, և օարտափելի կերպով մեծաճումեն, Քաղաքների ժամանակատր մեծութիւնը յառաջացնումէ մեծ վտանգներ հասարակական առողջութեան վերաբերմամբ, որովհետև նա ամեն տեղ կազմումէ սաստիկ խիտ բնակութիւն, Այնուամենայնիւ քաղաքների բռնած տեղերի տարածութեան մեծութիւնը համապատասխանումէ բնակութեան մեծութեան, մէկ կողմից մարդիկ աշխատումեն, որքան կարելի է, քաղաքական կեանքի կենդրոնի մոտ բնակել, միւս կողմից նոքա ստիպուած են բաւականանալու առաջւանից աւելի նեղ բնակարաններով վերջին տասն տարուայ մէջ կենսական պիտոյքների թանգութեան պատճառով, Այս պատճառով ոչ թէ միայն բոլոր տները չափազանց խիտ են քան թէ առաջւայ տարիներում, այլև, բացի նրանից, ամալի գետնի մնացած իւրաքանչիւր կտորը գործ է ածուում շինութեան համար, իսկ հին տները ընդարձակուումեն, որպէս զի կարողանան տեղաւորցնել կրկնապատիկ աւելի բնակիչ: Մարդիկների պղպիսի խտութիւնը՝ համարվում է անկասկած քաղաքների վատ առողջապահական դրութեան պատճառներից մէկը. որտե՛ս խոչ-ի-բոլոր է բն-ի-ն-ը, այնտե՛ս աւելի նոսր է իւր-մէն միմեանից օդը, և այնտե՛ս աւելի ապ-ի-ն-մէն բն-ի-ն-ը և ինչ-նոյնբոլոր, աւելի դժուար է լինում տների և փողոցների մաքրութիւնը պահել և աւելի զոհ են գնում մահուան համաճարակ հիւանդութիւնների ժամանակը:

Արանից յետոյ շատ զարմանելի չէ, որ շատ տեղերում զորօրինակ զիւղերում, ուր բնակութիւնը այնքան խիտ չէ ինչպէս քաղաքներում մահկանացութիւն աւելի սակաւ է լինում, և այս՝ մեծանումը քաղաքների այն մասերում, ուր ժողովուրդը աւելի խիտ բնակուած և կեդտօտ է։ Պէտք չէ միայն մոռանալ, որ սակաւաբնակ քաղաքների մասերում տեղաւորուած են գլխաւորապէս ընչաւէտ դասեր. իսկ եթէ պատահի, որ բնակչին այն ժամանակ մահկանացութիւնը նոցա մէջ աւելի շատ կլինի քան թէ խիտ բնակուած մասերում։ զաւով զիւղերին, որոնց բնակիչների ցրուած օգտակար զրութիւնը նուազումէ փնասակար պայմաններից, որոնք մինչև ցայսօր ևս գտանվումեն գիւղերում, այս պատճառով չափազանցութիւն կլինէր ասել, որ զիւղական բնակիչները քաղաքի բնակիչներից աւելի առողջ են։ Գիւղական բնակիչների առողջութիւնը՝ սովորաբար չափազանցումէ։ Ըշմարիտ է թէ և, իւրեան սովորութեան և աշխատանքին համեմատ համար

բերող գիւղացիներ աւելի շատ ժամանակ է տնցկացնում մաքուր օդի մէջ քան թէ քաղաքացիներ, այնու ամենայնիւ շատ գիւղերի ճշմարիտ քննութիւնները ցոյց տուին որ մահականացութեան կողմից յետ չեն մնում անառողջ քաղաքներից։ Այս բանը զարմանալի չէ, եթէ անդադար նայենք գիւղերի առողջապահական պայմանների վերայ, — ամեն տեսակ կեղտոտութիւններ, որոնք լիցուած են փողոցներում և բակերում, աղբի դեզերը տների և ջրհորների մօտ լինելը, արտաքնոցների սարսափելի դրութիւնը, բնակարանների, ախոռների և գոմերի միմեանց կից լինելը ևլն, — այս բոլորը միտքին յառաջացնում են ցիխ խռնաուծութիւն, գետնի ապականումն, գարշահատութիւն և օդի ապականումն՝ քան թէ քաղաքներում։

Գիւ զական բնակարանների այս դրութեան հետ աւելացրէք, ամեն օրի նոց հակառակ առողջապահական կանոններ, անձրեւոյին եղանակում խրճիթները լեցուած են մարդիկներով և նոցա օդը սովորաբար պիտի լինի բաղնիսի օդի նման խտացած վառարանի մօտ կախուած մանկական սպիտակեղէնների հոտով, ընտանի կենդանիներից յառաջացած դարչահոտով թուրմով, խոհանոցի հոտով, ծխով ևլն, Հասկանալի է, որ միմեկըրդի այդպիսի դրութեան մէջ եթէ մանի մի անսովոր մարդ՝ իսկոյն ակամայ յետ պիտի դառնայ, Եւ ոչինչ զարմանալի չէ, որ մանուկները այդպիսի հանգամանքներում մեռնումեն ճանձի նման. վատ օդը, անմաքրութիւնը ամեն հանգամանոց մէջ և մեծաւ մասամբ անյարմար կերակուրները յառաջացնում են մորթի և խուլբրի հիւանդութիւն, տաների ծառան, փոքր ուռչելը և մարմնի հիւանդութիւնը, որով շատ անգամ որոշումէ գիւղական գունեղ երիտասարդը, Այսպիսով գիւղերի մէջ առողջապահական պայմանները Խիստ դրութեան մէջ են գտնւում քաղաքների նման, և եթէ մինչև ցայսօր առողջապահական կանոն գլխաւորապէս գտնւումէր քաղաքներում, միայն նորա համար էր, որ նրանց մէջ աւելի մեծ հնարներ կային առողջապահութեանը հսկելու մասին, Այժմ ժամանակ է միայն ուշադրութիւն դարձնելու գիւղի այն բանի վերայ, որ գիւղացիք լաւ մաքրեն իրենց խրճիթները, որպէս զի աղբային կոյտերը շաղականեն գետինը, ջրհորները, ևլն, Արդէն մասամբ քաղաքների մէջ եղած առողջապահական լաւ կէտերը կարելի է մտցնել նաև գիւղերի մէջ:

Նոր-Քնոյ Դէպքի Էջնութիւնը.— Մարդկային նորարանակ տեղերի շինութեան վերաբերմամբ առողջապահական կանոնի պահանջութիւնները կարելի է երևին շափազանց տեսական. բայց չէ՞ որ տեսութիւնը (теория) միշտ յառաջ պիտի ելլայ գործնական կրթութեամբ և հասնի կատարելութեան, ուշք չզարձնելով նորա վերայ թէ կարելի՞ է արդեօք նորա անշուշտ գործադրութիւնը թէ չէ. Այսպէս և այստեղ առողջապահական կանոնը ցոյց է տալիս միջոցներ և ծանապարհներ, որոնք անհոգ են կացուցանում առողջապահական պայմանների բարւոքումն, իսկ նորա խորհրդների գործնական գործադրութիւնը յառաջանումէ միայն աստիճանաբար, որքան որ կարելի է տուած պայմանների համեմատ նոր քաղաքներ

կամ բնակութիւն հաստատելու միջոցին պէտքէ խոյս տալ այն անյարմարութիւններէ, որոնք կապակցութիւն ունին հին քաղաքների շինութեան հետ:

Պէտքէ հեռանալ նեղ փողոցներից և ըստ կարի մերժել տների տափարակ կարգերը: Ապագայ մարդկային բնակութիւնները չպէտքէ համապատասխանեն մեր այժմեան քաղաքների մասին եղած հանդամանքներին, և շատ շուտով կնւմանին քաղաքներից դուրս շինուած տների խմբին: Այնպիսի մեծ տների մասին, որոնք նման են զինուորանոցներին և որոնք այժմս իւրաքանչիւր քայլում պատահում են, խօսք չկայ՝ որ ըստ կանոնի պիտի ընդունուած լինի երկյարկանի տուն: Որի մէջ կարելի է տեղաւորցնել շուրս ընտանիք, իւրաքանչիւր տունը շրջապատուած պիտի լինի սրահակերտով և այգիներով, փողոցները պիտի լինին լայն և լաւ սալադատուած, երկու կողմերից պիտի գտնվին առանձին լայն սալադատակներ (тротуары) ծառերով տնկուած, աւելի լաւ է նաեւ շինել փողոցների մէջ ծառաստաններ (бульвары): Քաղաքի կենդրոնում — կառավարչական շինութիւններ, ուսումնարաններ, համալսարաններ, թատրոններ վաճառափողոցներ և ընդ որքա պէտքէ ցրուած լինին քաղաքի երկայնութեամբ փոքրիկ խմբերով: Որպէս զի բնակիչները կարողանան տարածուել: Բոլոր հասարակական շինութիւնները պիտի շրջապատուած լինին այգիներով: Այս ցրուեալ մտաւորական տնտեսական կենդրոնների հաղորդակցութիւնը փողոցների հետ, ըստ կարի պիտի լինի լայն և լաւ պատրաստուած — երկաթուղիով և ընդ Վաճառականական շինութիւնները, որոնց ապականած օդից, ջրից կամ գետից անկարելի է փախչել, պէտքէ քաղաքների շրջակայքից դուրս հանել: Զրանցքներ, աղբիւրներ և լաւ առուակներ միշտ կարեւոր են ամեն քաղաքի համար:

Առաջին անգամ այսպիսի նախագիծը կերևայ չափազանց գաղափարական, բայց գործնականի մէջ մենք բոլորովին հեռու չենք նորա կատարելուց: Արդէն շատ տեղերում փորձ են փորձում հաստատելու քաղաքներից դուրս առանձին դաստակերտներ, որոնք ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ մեր քաղաքի նկարագրած գաղափարին հասնելու նպատակը: Բայց ափսոս՝ որ այս դաստակերտները իրենց ներկայ դրութեամբ չեն կարող քաղաքների տեղը բռնել: Նրանք այնպէս են շինուած, որ միայն բնակիչների փոքրիկ մասը կարող է ամբողջ տարի նրանից օգուտ քաղել, միշտ հաղորդակցութիւն ունենալով քաղաքների հետ:

Որպէս զի դաստակերտները փոքր առ փոքր ձեռք բերեն իրենց անկախութիւնը և չճշմունք քաղաքներ իրենց այժմեան դրութեան մէջ, հարկաւոր է տեղափոխել այնտեղ հասարակական շինութիւնները, և զարմնել հասարակական կեանքի, արհեստի, գիտութեան և կառավարութեան փոքրիկ կենդրոնները: Այնու ամենայնիւ նոցա շինութեան միջոցին պէտքէ հետեւել ընդհանուր նախագծին, և շինել այնպէս, որ քաղաքի ամենափոքր մասին ևս զիրարամերձեանալի լինի: Այդպիսի դաստակերտները

լինելուց յետոյ կարելի էր հիմնել հաստատուն բարեգործական ընկերութիւններ յոգուտ տեղական հասարակութեան:

Նոր փողոցներ և նոր թաղեր, որոնք անմիջապէս միանում են քաղաքի հին մասերի հետ, երբէք չեն կարող հասնել արտակետանցման (децентрализация) այն աստիճանին, և հետևաբար այն բարձր առողջապահական նշանակութեամբ ինչպէս են դաստակերանների թաղերը՝ որովհետև գետինը անմիջապէս մօտ լինելով քաղաքներին՝ սաստիկ թանգ է և շատ հասկանալի է, որ նորա տէրերն են թանգացնում նորան, Թէպէտ և հասարակաց օգտի համար կարելի է անձնական իշխանութիւն սահմանափակել՝ բայց այս սահմանափակումն այնպէս չէ կարելի անել, որ գետնի զինը բոլորովին ցածանայ: Շատ ցանկալի էլ լինէր, եթէ նոր փողոցներ շինուէին պովելեօնի ձևով (система), այսինքն, այնպէս որ բոլոր աները լինին մի կարերկարականի՝ ճակատի կամ կողքի պարտեզներով, որոնք ապահովացնում են օդի հոսումը և փողոցային փոշուն դժմարգելք են լինում:

Եթէ որ այս վերոյիշեալ պայմանները զգուարէ կատարել՝ այն ժամանակ պէտքէ միայն քիչով բաւականանալ, բայց այնու ամենայն տների բարձրութիւնը փողոցների լայնութիւնից աւելի չպիտի լինի, բայց նրանից ճակատի պարտեզների համար պիտի որոշուած լինի մի որոշ մեծութեամբ տեղ. բակի մէջ եղած շինութիւնների բարձրութիւնը բակի լայնութիւնից բարձր չպիտի լինի. և նոյն իսկ շինութիւնը պէտքէ մի որոշ հեռաւորութեան վերայ լինի մեծ շինութիւնից և մերձակայ աներից, վերջոյպէս փողոցներ շինելու ժամանակ պէտքէ աշխատել, որ արևի ճառագայթները ազատ թափանցին, ամենից լաւ է ձգել գլխաւոր փողոցները հարաւ—արևելքից դեպի հիւսիս—արևմուտք, կամ լճէ հարաւ—արևմուտքից հիւսիս—արևելք:

Քաղաքի մասերը — Խօսենք այժմ մեր քաղաքների մի յատկութեան վերայ, որը սաստիկ վատ ազդեցութիւն ունի բնակիչների առողջապահական կազմուածքի վերայ: Արհեստահական, վաճառականական և ուրիշ արուեստների զարգացումն, նոյնպէս քաղաքների հին կենդանական մասերը լաւացնելու և զարգանալու և շատ հին շինութիւնները ոչնչացնելու մասին ընդհանուր ձգտումը, բոլորն ևս ցոյց են ապիս բնական տեղերի կարգաւորումն: Միշտ և ամեն տեղ ի հարկէ լինում էին քաղաքի հարուստ և աղքատ մասեր, բայց վերջին ժամանակում մեր մէջ ընդդիմութիւն բաւական զօրացաւ. քաղաքների հարուստ մասերը միշտ զարգարուած են լինում՝ նոր նոր փողոցներով, գեղեցիկ և ճօխ տներով և պարտեզներով, իսկ աղքատը թաղեր աղատատանարան են լինում՝ զրկեալ այն բնակիչների, որոնք աստիճանաբար դուրս են գալիս լաւ փողոցներից բնակարանների զինը բարձրանալու պատճառով, այստեղ ապրում են ստոր աստիճան և աշխատաւոր մարդիկների դասը, որոնք հարկազրուած են բաւականանալ միայն էփան գնով եղած տների մէջ բնակուելով. այստեղ բնակութիւնը շատ խիտ է. տներն ու փողոցները սարսափելի ցեխոտ, այս-

տեղ սոփորաբար ծնանումեն համաճարակ հիւանդութիւններ և նոքա այստեղ յափշտակումեն բաւական զոհեր ուստի և նրանց վերայ պէտքէ ուշադրութիւն դարձնեն մարդկութեան ճշմարիտ բարեկամները— քաղաքային կառավարութիւններ:

Այս պակասութիւնը փոքր ինչ կարելի է նուազեցնել հրատարակելով առողջապահութեան համար սահմանուած ստիկանութեան կողմից զեկուցումներ: Եւ տների և սրահների մաքրութեան վերաբերմամբ նշնակէա շատ հոգս պիտի տանել առատօրէն ջուր մատակարարելու համար որպէս զի քաղաքի աղտոտութիւնները և անմաքրութիւնները ժամանակ առ ժամանակ մաքրութիւն բաց աւելլալու օգնութիւն տրն կարող է լինել, որ աղքատ թաղերի կենսական պայմանները փոխեն: Այս չարեաց գլխաւոր պատճառը բանում է կայանում, որ այժմեան հանգամանքներին նայելով քաղաքային բնակիչների մեծ մասը չէ կարողանում գտնել միւսնոյն միջոցներով առողջապահական կանոններին համապատասխան բնակարաններ:

Այս թշուառների ապաստանարանը լինում են ներքնատուները, սրահի մութ բնակարանները, վերնաշարկերը, հեռացած թաղերի ցեխոտ, կիսաներկ տները, իջևանների անտանելի ծակ ու պուճախները ևլն: Բացի սորանից տէրերը հարստահարումեն ամենանգութ կերպիւ այս խեղճերին: Նրանք վճարումեն իւրեանց թշուառ բնակարանների մասին անհամեմատ աւելի թանկ քան թէ հարուստ մարդիկ իւրեանց յարմար ընդարձակ լուսաւոր բնակարանների համար: Ուրիշ հանգամանքներում կարող էին նրանք ունենալ լաւ և առողջարար բնակարան: Այդպիսի բնակարանների բացակայութիւնից յասաջանումէ քաղաքացիների աշխատաւոր դասին արհեստաւորների ցած աստիճանաւորների թշուառութիւնը ևլն: Նորանից կախումն ունի նաեւ շատ քաղաքների մահկանացութեան թիւը և անկասկած՝ նրանց առողջապահական մասը բարւոքելու համար պէտքէ բոլորովին անհետացնել երկրիս երեսից ցեխոտ թաղերը և տալ նրանց փոխարէն իւրեանց պահանջմունքներին և միջոցներին յարմար բնակարաններ:

Աղտոտելէ հետո առողջ բնակարաններէ չլինելէն: Որովհետեւ բնակիչների այն դասը որի մասին մենք խօսում ենք, չէ կարող չլինել իւր հաշուով նոր տներ ուստի յոգուտ հասարակական առողջապահութեան պէտքէ օգնել նորան ուրիշ ձանադարհով:

Այս օգնութեան գեղեցիկ նպատակը հասկանալով բարեգործ անձինքն արդէն վաղուց հաստատած են բնակչութիւններ քաղաքային աղքատ դասի բնակարանները բարւոքելու նպատակով: Նրանք չլինու մէկն աներ աղքատների համար, չառնելով բոլորովին այս մասին ծախսուած դրամադրի տոկոսը: Բայց շուտով համոզուեցան, որ բարի նպատակին չէ կարելի հասնել շուտով՝ միայն մարդասիրական ընկերութիւններով, որովհետեւ բարեգործական ընկերութեան միջոցները բոլորովին բաւական չեն, որ խեղճ բնակիչների մի աննշան մասին մատակարարեն լաւ բնակարաններ:

Եւ որովհետեւ աշխատաւորները տները պիտի վճարեն ծախսուած դրամա-
ղլխի սովորական տոկոսը, առանց ծանրաբեռնելու բնակիչներին նիւ-
թականը, ուստի միտք ծագեցաւ որ այս բոլորը գործ գնեն առեւտրական
սկզբունքի վերայ, և գրաւեն զէպի այն՝ դրամադրութիւնները անձերին:

Հարցին այդ կէտից նայելով՝ աւելի ճիշդ և մեծ յոռաջողութիւն
կարելի է յուսալ քան թէ բարեգործական սկզբունքների վերայ հիմ-
նուելով: Անգլիական շատ քաղաքներում շինած են արդէն շինութիւն-
ներ այս հիման վերայ, և հազարաւոր շուենեւոր մարդիկ ստացած են պե-
ղեցիկ բնակարաններ: Հատ գործարանատէրեր շինեցին իրենց հաշ-
ւով աշխատաւոր մարդիկների համար Անգլիայում, Ֆրանսիայում, Գեր-
մանիայում, Չեխիերիայում բնակարաններ և մինչև ցայսօր ոչ որ նը-
րանցից չէ գտնուած այդպիսի ձեռնարկութիւնների տնտեսական կո-
րտի մասին: Պարտականութիւն ենք համարում յայտնել դրամատէրերին,
որ իրենց ուշադրութիւնը դարձնեն այն բանի վերայ, որ շուենեւոր դասերի
համար բնակարանները շինութիւնը կարելի է հիմնել առեւտրական հիման
վերայ: Հետևաբար դրամատէրերը մեծ ծառայութիւն արած կլինեն հասա-
րակաց առողջութեանը՝ ոչինչ նեղութիւն չքաշելով նրանից, եթէ հիմ-
նած լինէին հաստատուն հանգանակական (акционерный) ընկերութիւնների
որոնք պիտի աշխատէին ոչնչացնել այժման խեղճ չքաւորների բնա-
կարանները, որոնք մեր հասարակական կեանքի կենդրոնների ամօթը պիտի
վերցնէին, և պիտի լինէին լաւ առողջարար թէև բոլորովին հասարակ
բնակարանների անգլիական ճաշակով, կամ մի ուրիշ տիպով, որը յար-
մար կերեար: Թագաւորական և քաղաքական ընկերութեան կառավա-
րութիւնները ևս չպիտի լռեն այս մասին: Այժմեան ժամանակում անբան
պարզուեց ժողովրդական կեանքի առողջարահական պայմանների բար-
ւոքման նշանակութիւնը, որ ամեն տեղ գործ են ածվում հարիւր հա-
զարներ և միլիոններ այդպիսի շինութիւնների համար, որոնք ծախսուած դրա-
մադրխի տոկոսն ևս չեն բերում, բայց նրանք այն օգուտն են բերում, որ
կարողանում են բնակիչների հիւանդութիւնները և մահը նուազեցնել (քա-
ղաքների ջրանցքներ և լին): Բնակարանական յեղափոխութիւնը պատկա-
նումէ նորա—հաստատ ընկերութիւնների գործունէութեանը, ուստի ցան-
կալի կլինէր, որ ինչպէս ընկերութիւնները նոյնպէս և աէրութիւնը նպաստէր
բնակարանների շինութեանը եռանդով: Այս պատճառով հասարակա-
կան օգնութիւնը կարող է լինել զանազան ձևով, օրինակի համար
գիջանելով տան գինը կամ բոլորովին բաշխելով: Եւ շինութեան հո-
ղեր՝ վերոյիշեալ նպատակի համար կազմուած մասնաւոր ընկերութիւն-
ներին, և միւսնոյն ժամանակ եթէ կարելի է փոխառուութեամբ տրուի
դոցա թագաւորական և ընկերութեան գումարներից բաւականաչափ դրա-
մադրութիւն ամենաբիշ տոկոսով, և լին: Մինչև անգամ շատ քաղաքներ իրենք
պիտի աշխատեն շինելու առողջարար տներ խեղճ բնակիչների համար:
Ընկերութեան գումարից այդպիսի ծախս անելը՝ ժողովրդական մի դասի

վիճակը բարեօրելու համար շատ մեծ նշանակութիւն ունի հասարակական առողջութեան վերաբերմամբ, բացի սորանից ծախսում զրամադրուիլը բաւականաչափ շահ բերելով, օգուտ կլինէր թէ նոյն ինքն ընկերութեան և թէ աղքատ բնակիչներին: Տէրութեան և մասնաւոր քաղաքների մասնակցութեան մի քանի դէպքեր, բանւորների բնակարանները շինելու վերաբերմամբ, արդէն յայտնի են ինչպէս նապոլէօն Գ. Միլիտառեան ընկերութեան տուած է թագաւորական դանձարանից բաւականաչափ գումար առանց տոկոսի: Պիլճիայում՝ այդպիսի մասնաւոր ընկերութիւնները պահպանվում են քաղաքների ունեւոր բնակիչների հաշով: Անգլիայում 1866 ից սկսած գտանվում է Պարլամենտից զրուած կանան մասնաւոր ընկերութիւններին, որոնք պարապում են էժան գնով բնակարաններ որոտարտելու աշխատաւորների համար: Միայն թէ փոխ տրուի տէրութեան գումարից 40 տարի ժամանակով, վերջապէս 15 տարի սորանից առաջ Լիվերպուլ քաղաքը դնեց 21000 ֆունդ ստերլինգով քաղաքի բոլոր աշխատաւորների շինութեան հողերը և այժմ այս հողի վերայ շինուած են ահագին քանակութեամբ բնակարաններ: Այսպիսի օրինակներին լիովին արժանի է հետեւելու:

Ընդհանուր բնակարանները. — Ամենազիջաւոր հանգամանքներից մինը այն է, որ ինչպէս նոր բնակութիւններ հաստատելու միջոցին, նոյնպէս և առողջապահական պայմանների բարեօրում հին քաղաքներում կազմում է ջրի առատ մատակարարութիւնը, բայց ափսոս որ մինչև այժմ առողջապահական այս հիմնուոր պահանջմունքը անկատար է մնացած: Շատ անգամ ամբողջ մեծ գիւղում չէ գտանվում ջրհոր, ջուր բերում են հեռու եղած աղբիւրից և պահում են ամբողջ օրերով հոտած տեղերում, կամ թէ մի օրեւ է փոսից, որի մէջ ժողովում են կաւախառն անձրևային ջուր: Բայց քաղաքները ևս շատ անգամ ունենում են ջրի վատ մատակարարութիւնը, ինչպէս նորա որպիսութեան վերաբերմամբ նոյնպէս և քանակութեան:

Ջրի բնական. — Աղբիւրների ցուցիչներ մարդկային բնակութիւններ հաստատվելուց առաջ, պէտք է հոգս տանել նորա համար լաւ ջուր ձեռք բերելուն: Եթէ չկան մերձակայ տեղերում բնական աղբիւրները պէտք է գտնել ջուր գետնի խորքերում: Աղբիւրների կամ գետնի ջրի գտնելը երբեմն շատ դժուարութիւն է լինում, և կան պիսիպի մարդիկ որոնք մասնաւորապէս այս բանով են զբաղուած, զոր օրինակ, Ֆրանսիացի Պատամէլ վանահայրը և ըն. որոնք հոշակուեցան: Ստորերկրիայ աղբերակներ գտնելու համար պէտք է նախ ինկատի ունենալ գետնի շերտերի կազմուածքը և յատկութիւնները և բուսականութեան որպիսութիւնները, ամենից աւելի կարելի է նոցա գտնել, խիտ հիւթալի խոտերով ծածկուած ցած տեղերում, Խեցգետնային, կրի և կէիպերովեան կազմութիւնները յարմար են աղբիւր յառաջացնելուն:

Ստորերկրեայ աղբիւրները գտնելու համար գործ են ածում նորտոնո-

վեան զշիրանման ջրհան մեքենայ, որից մեծ օգուտ քաղեցին Անդղիա-
ցիք Հարեհատանցւոց զէմ եղած պատերազմում:

Մտաւ ջրի էլէկտրական զէմը մէջ Բաշի գործընթացին հետեւի—Ջրի մատա-
կարարութեան զանազան միջոցներին դիմելուց առաջ, ասեմք մի քանի
խօսք հասարակաց մէջ տարածուած սխալ կարծիքը հերքելու համար, որը
կարող է ունենալ վատ հետեւանք հասարակական առողջութեան մասին,
զոր օրինակ, երբ խօսուի մեն ընակուած տեղերի ջրի մատակարարութեան
և նորա առողջապահական նշանակութեան մասին, սովորաբար հասկա-
նումեն միայն խմելու և կերակուր պատրաստելու ջուր, իսկ մարմնի սպի-
տակեղէնների և ամանների լուանալու ջրին ուշադրութիւն չեն դարձ-
նում:

Որքան ևս չբացատրելով խմելու ջրի մաքրութեան հոգս տանելը, հար-
կուոր եմ համարում ցոյց տալ այն բանը, որ ցեխոտ ջրի գործածու-
թիւնը զանազան տնտեսական բաների համար այնքան վտանգաւոր է և
մինչև անգամ ևս աւելի վտանգաւոր, քան թէ խմելու համար գործած-
ուած ապականոցած ջուրը, վերջինիցս զխաւորապէս վախենում են նորա
համար, որ շատ բժիշկների կարծիքով նորանով կարելի է տանել գործա-
րանների մէջ համաճարակ հիւանդութիւնների (տիֆ և խոլեր) սերմերը,
որոնք մտած են նորա մէջ գտնից ինչպէս որ կարծւումէ: Այս երկիւղը
բոլորովին հիմնաւոր չէ, պէտքէ միայն յիշել թէ վարակիչ հիւանդու-
թեան սերմերը եթէ գտանվումեն հողի մէջ, պէտքէ անցնի ոչ թէ միայն
խմելու ջրի մէջ այլ և մեծ քանակութեամբ օդի մէջ ևս, և որովհետև
իւրաքանչիւր օրուայ մարդուս ներշնչած օդը մի քանի հազար անգամ
շատ է ջրի քանակութիւնից, որը նա գործ է ածում խմելու կամ կե-
րած կերակուրների մէջ, այն ժամանակ աւելի ուղիղ կլինի տեսնու թէ
հիւանդութեան յառաջացնող նիւթերը ընդունվումեն աւելի մարդուս թո-
քերով քան թէ ստամոքսով: Հետեւաբար յատակների և ամանների ելն-
լուացուած ջուրը գոլորշիանալով և հաղորդելով օդին փնտտակար նիւ-
թեր, կարող է մեր առողջութեան աւելի փնտտ հասցնել, քան թէ
խմելու ջուրը, ուստի գործածութեան ջուրը պիտի լինի այնքան ա-
ւելի մաքուր որքան խմելու համար գործածուած ջուրը:

(Թարգմանութիւն)

ԳԵՂԵՔ. ՃԵՏ. Ա. ԼԱՐԻՆԻ ՈՒՍԱՆՈՂ

ՍԱՐԳԻՍ ՏԵՐ ԴԱՐԵՐԵԼԵԱՆ

